

մէջ ներհակ կրքեր կը պատերազմէին : Բայց վերջապէս մեր անձնական թշնամեաց և ամեն մեղի չարիք ընողներուն ներելու աւետարանական սուրբ պատուէրը յաղթանակեց վրաս : ձեռքերս երկընցնելով աղաչեցի որ ոտք ելլէ :

— Ոչ, կ'ըսէր, ոչ, ես չեմ ելլար ինչուան որ քու թողութեանդ վրայ չապահովեամ :

— Բայց ես, եղբայր, արդէն բոլոր սրտանց ներեր եմ քեզի : Ելիր ուրեմն և համբուրէ զիս :

Սաստկութեամբ մը վեր ցատքեց, և մեծաւ զեղմամբ խնդութեան, թեւերով պարանոցիս պլլուեցաւ և կրկին և կրկին համբուրելով երեսս՝ կանչեց . Ո՛հ, շնորհակալ եմ, եղբայր, հիմա կը սկսիմ ապրիլ :

Իսկ ես ուժով մը զինքը կուրծքիս վրայ սեղմեցի, և ստէպ համբուրեցի, ըսելով . Միատեղ ապաշխարենք : Եթէ հասարակաց եղաւ մեր սխալմունքը, մեր քաւութիւնն ևս հասարակաց ըլլայ :
կը շարունակուի :

ՀԱՅԻ ՊԱՏԱՌԻ ՄԸ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՄԱՐԴ

ՆԱՄԱԿ ՎՅՅԵՐՈՐԴ

Ատաւոռնք

(Տես երես 302)

Երբ, ինչպէս կ'ըսեն, իմացականութեան հասակը մտար, և այս խօսք մըն է որ շատ բան կը նշանակէ, սիրելի օրիորդիկ, բուն ակռաները, անոնք որ բոլոր կենացդ մէջ պիտոր կրես, սկսան մէջերնին շնչել . « Հապա, ահա մէկ պզտի աղջիկ մը որ կը սկսի դատողութիւն ունենալ, ու հիմա՝ կամ երբեք ոչ կարող պիտոր ըլլայ իր ակռաներուն վրայ խնամք ունենալ : Փորձե՛ք զիմագրաւ ըլլալու » : Ըսել և ընել մէկ ըրին . ուրիշ որոմնադիրք առջիններու

տակը ինկող խցիկներու մէջ գործի ինկան, և հետզհետէ որ ցկեանս տեւելի ակռան կը մեծնար ու կը մեծնար՝ կաթի ակռան դուրս կը մղէր, որ առժամանակեայ կը գտնուէր հոն՝ անոր տեղը պահպանելու համար :

Այս պայմանիս մէջ ես հիմա, և կ'ըմբռնես ինչ պատասխանատուութիւն ունիս ատոնց առջին, և բանը աղէկ հսկելն է այսուհետեւ այս քաջատամանց վրայ, որ վրադ վստահութիւն ունեցան, և որոնց տեղ այլք չփոխանակեն պիտոր՝ եթէ թողուս որ երթան :

Ի վերայ այս ամենայնի, այս փոփոխութեանս մէջ բան մը չես կորսնցնէր : Առաջ քսանուշորս ունէիր . հիմա քսանութ ունենաս պիտոր : Ի՞նչ կ'ըսեմ, քսանընթ . երեսունուերկու . սակայն վերջի չորսը քիչ մը ուշ պիտոր բուսնին : Իւրաքանչիւր կողմի՝ թէ վերի և թէ վարի աղօրիքը՝ յայտնուելու համար սպասէ պիտոր որ մեծ ըլլաս : Ասոնք ծանր ու երկչոտ են, և ինքզինքնին զիւրաւ վտանգի մէջ չեն ձգեր . ուստի և իմաստոքեան շարունակ կոչուած են, վասն զի կը համարուի որ երբ ասոնք կը յայտնուին՝ մարդս ալ կատարեալ իմաստուն կ'ըլլայ : Կայ ասկէ որ երեսուն տարուան հասակին մէջ կը բուսնին, և պէտք է դու ալ իրաւը տաս՝ որ մէջերնին դժկամակութիւն ձգել է, եթէ այդ հասակին մէջ մէկը իմաստուն չըլլայ :

Ամեն բան չըսի քեզի, կայ պակաս բան ալ . բայց այս ամենայն բաւական է քեզ համոզելու այս պզտի ոսկերաց կարեւորութեանը վրայ, որոնք տղաքը շատ անգամ ըստ արժանւոյն չեն յարգեր, և որոնց կեանքը շատ անգամ այնչափ անփութութեամբ վտանգի մէջ կը ձգեն, ինչպէս թէ ծոցերնին՝ ուրիշ պատրաստ ունենային անոնց տեղը փոխանակելու : Եթէ մարդուս իր կերակուրները աղէկ ծամելու համար այդպիսի յարմարութեամբ պատշաճեալ գործիներ տրուեցաւ, ըսել է որ սնտի բան մը չէ իրեն համար որ կերակուրները աղէկ գէշ ծամուին : Անոնք որ կէս մը ծամած

պատառներ կը կլեն, չեն դիտեր որ ստամոքսը բռնադատուած է անկէ ետքը բոլոր այն գործողութիւնը ընելու որ ակռաներուն կ'իյնար ընել, և այս աղէկ խնայութիւն գիտնալ չէ յիշաւի: Քիչ մը ետքը կենդանեաց վրայ որ խօսելու ըլլանք՝ տեսնաս պիտոր որ զարմանալի փոխարինութեամբ մը՝ ստամոքսին զօրութիւնը միշտ ակռաներու անբաւականութեանը համեմատական է, և թէ հետեւաբար այնչափ աւելի տկար է՝ որչափ ծամելիքը աւելի հզօրաբար զինած է: Արդ մեր ծամելիքը որչափ կրնանք փափաքիլ՝ անանկ զինած է: Ասով բոլորը զուրցած կ'ըլլամ: Պէտք է ուրեմն ըստ այնմ գործել տալ անոր. և այն պզտի աղջիկը՝ որ աւելի շուտ լմնցնելու համար ատամանց գործը կը զողնայ ու ստամոքսին վրայ կը ծանրացնէ՝ կը նմանի այն մարդուն՝ որ երկու ծառայ ունենալով, մէկը կորովի ուժեղ, միւսը տկար ու դիւրավտանգ, առջինը կը թողու որ ըստ կամս տարու բերի, ու բոլոր աշխատութիւնը երկրորդին վրայ կը բեռնաւորէ: Ատոր մէջ արդարութիւն չկայ, անանկ չէ մի. և որովհետեւ անիրաւութիւնը միշտ կը պատժուի, գործն ալ գէշ կ'ըլլուի:

Այս գործը՝ որուն վրայ է խօսքերնիս, մեր կերածը՝ տեսակ մը խիւս դարձնելու վրայ կը կայանայ, կամ տեսակ մը ջրային հայս, որուն մէջէն աւելի իրեն ինկած մասը կը քաղէ: Արդ ակռաները որչափ կտրտեն ու փշրեն՝ փոշի կ'ընեն՝ այլ ոչ խիւս, եթէ անհրաժեշտ օժանդակէ մը անդադար օգնութիւն չընդունէին: Պզտի տղոց խիւս շինելու համար՝ հացը աղէկ մը մանրելէն ետքը ինչ կ'աւելցնեն վրան: Թէպէտ և դեռ ևս մեծ խոհակեր մը չես՝ այդ բանը դիտես. լեցուցածը ջուր է: Աստուած՝ որպէս զի մեզի օժանդակէ որ կարենանք արեան պէտք եղած խիւսը պատրաստել, մեր բերնին չորս դին պզտի սպնդինման բաներ յարմարցուցած է, որոնք միշտ ջրով լեցուն են: Ասոնք լորձնաքեր գեղձը կը կոչուին: Այս ջուրը ինքնիրեն կը վաղէ՝ երբ ծնօտք

իրենց երթեակ շարժմամբը պզտի ըսպուգները կը ճնշէ: Այս ջրին անունը, ըսելու պէտք չկայ, թուքն է:

Քեզի ջուր որ կ'ըսեմ, չկարծես որ նմանութիւն մը ընելու համար կ'ընեմ: Լորձը կամ թուքը զուտ և պարզ ջուր մըն է՝ որուն մէջ քիչ մը բնասպիտակուց կայ: Այս բառէն չըլլայ թէ վախնաս. անանկ գէշութիւն մը չունի ինչպէս որ ձայնէն գուշակել կու տայ. պարզաբար հաւկթի ճերմկուց կը նշանակէ: Կայ դարձեալ մէջը կտոր մը սոդա, որ օճառ շինելու կը ծառայէ, որով ամեն առաւօտ ձեռքերդ կը լուսաս: Ասքեզի կը մեկնէ թէ ինչու համար թուքը կը փրփրի, երբ լեզուն և այտերը՝ խօսած ժամանակնիս՝ բերնին մէջ կը ծեծեն զայն: Նոյն բանը կ'ըլլայ նաև հաւկթի ճերմկուցին և օճառի ջրին, երբ ամանի մը մէջ զարնուելու ըլլան:

Սակայն այդ բնասպիտակուցը և այդ սոդայն անոր համար չեն դրուած բերնին մէջ որ թուքը փրփրեցնելու զբօսանքը տան մեզի: Ատոր համար այդչափ աշխատանք չէր արժեր: Ասոնք ջրին աւելի զօրութիւն կու տան՝ որ ուտելիքները խիւս դարձնէ, և անոնց համար այն այլափոխութեանց շարքը կը սկսին, որ մերձաւորէ մերձաւոր, վերջապէս կարմիր արիւն մը ըլլալու ճամբայ կը դնեն, ճշգիւ անոր նման որ երբ անճարակութեամբ ասդիդ ծայրովը մատդ կը խայթես՝ ծայրը կաթիլ մը կը ձևանայ:

Մէյմը ակռաներէն աղէկ մը մանրուելէն և թուքէն աղէկ մը թրջուելէն ետքը, վերածուելով այն նիւթը որ շատ անգամ տեսած պիտոր ըլլաս, երբ այս կամ այն պատճառէ ծամածդ հարկ եղաւ թքնելու, ուտելիք ալ բերանը մնալու գործ չունին: Անկէ ետքը աւելի հեռու ճամբայ մը պէտք է երթան: Սակայն ետեւի դռնէ ելլելը՝ անանկ բոլորովին պարզ բան մը չէ՝ ինչպէս առջևի դռնէն մտնելը: Քիչ մը շատ խառնակ գործողութիւն մըն է, որ երկու խօսքով բացատրելը կարելի չէ, և կարծեմ որ այսօրուան համար բաւականա-

պէս շաղակրատեցինք: Բաւական է նաև որ այս անընթացի ակումներով ձանձրացուցած չըլլամ: Բայց հիմա սպասէ որ նոր բան սորվիս:

ՆԱՄԱԿ ԵՕԹՅԵՐՈՐԴ

Կոկորդը

Եր յիշես, օրիորդիկ, այն մէկ դռնապանը, որուն վրայ այնչափ երկայն խօսեցանք, և որ լեզուին մէջ յարմարացուցած է իր բնակութիւնը:

Ինչէն կը ճանչցուի դռնապանը՝ երբ տան մը գաւիթը մտնելու կ'ըլլայ մէկը: Իր ձեռքի աւելէն:

Աղէկ ուրեմն, լեզուն՝ որ զխաւորաբար մեր դռնապանին ծառայութեանը որոշուած է, անմասն աւել մըն է, որ ինքնիրեն կը շարժի, երբեք չմաշիր և ոչ ալ փոշի կը հանէ. առաւելութիւն մը որ բոլոր մեր իմաստութեամբ չկըրցանք մինչև հիմա մեր աւելներէն ունենալ:

Երբ այս ծամուած պատառը, որ ալ ակումներուն տակը ընելու բան մը չունի, աւելի հեռուները խրկելու ժամանակը գայ, աւելը մէկէն ոտք կ'ելլէ լրնտերաց բոլորտիքը պտրտելով, երթալով գալով՝ աջ ու ձախ, առջևը ետևը, ամեն անկիւնը փնտռելով, բերնին մէջ ձևացած խիւսին մինչև ետքի փշուրները կը ժողովէ, և հետզհետէ որ կոյտը կը ստուարանայ, աւելը թիակ կը փոխուի կ'ըլլայ, առաւելութիւն մը դարձեալ որ մեր երեւակայած բոլոր գիւտերը չունին: Իր ժողովածը՝ հետզհետէ իր կռնակը հաւաքուելով կը կլորի կ'ըլլայ պզտի գընտակ, որ վերջապէս լեզուին ու քմաց մէջ տեղը կը բռնուի, անանկ որ ալ չկարենայ փախուստ տալ: Այն ատեն լեզուն իր ծայրը՝ վերի հերձատամանց վրայ կը կուրացնէ՝ որ իբր յեցման կէտ կը ծառայեցնէ, վերէն դէպ 'ի վար կը խոնարհի, ինչպէս ճօճանոց ձևացող տախտակ մը, և... բայց անանկ շուտ առաջ չերթանք:

Բերնին ետևը, որ ինչպէս ըսինք՝

նախասենեակն է, տեսակ մը անցք կայ, որ բերնէն՝ մնէ պզտի լեզուակով մը բաժնուած է, և այս ալ քիմքէն կախուած, որ և ամենեին կրնայ նմանցուիլ այն պատառակալէ դրան վարագոյրներու, որ շատ անգամ երկու սենեակ մէկմէկէ կը զատեն, և որոնք վերցունելով կարելի է տակէն անցնիլ:

Եթէ այս անցքը միայն բերնէն ստամոքսը տանէր, աշխարհքիս ամենապարզ գործողութիւնը՝ կլլել պիտոր ըլլար. լեզուն կը տնկուէր, պզտի դնտակը կը կը սահէր՝ դռնէն կ'անցնէր, և անկէ ետքը յաջող ճանապարհորդութիւն: Դժբաղդաբար տան ճարտարապետը կարծես թէ հոս չէնքի խնայութիւն մը բրած է: Անցքը երկու վախճան ունի: Մի և նոյն ժամանակ թէ բերնէն ստամոքս ճամբայ մըն է և թէ քթէն թոքերը՝ մուտք: Մեր շնած օդը ասոր մէջ իրեն յատուկ երկու դռներ ունի, մէկն որ քթին մէջ կը բացուի, միւսը թոքոց մէջ, որոնց մէջէն ուտելիք անցնիլ չեն կրնար: Կրնաս ըմբռնել որ ատունք այնչափ չարութենէ չեն հասկնար, և մէկ դռնէն կամ միւս դռնէն անցնիլ՝ բոլորովին անտարբեր են: Այնչափ տղաք կան, որ բանաւոր խելք ունին, և սակայն իրենց արգիլուած տեղերը դարձեալ կը մտնեն: Ուստի պէտք չէ կտոր մը խիւսէ պահանջել որ այս տղաքներէ աւելի բանաւոր ըլլայ: Պէտք էր ուրեմն անանկ ընել որ ընտրութիւն ընելը չկարենայ, և անցքը հասածին պէս ուրիշ դուռ չգտնայ՝ եթէ ոչ իր յատուկ դուռը, որ է ստամոքսինը:

Եւ իրաւցնէ ալ եղածն այս է:

Թերևս երբեք դիտած չըլլաս որ երբ կըլլելու կ'ըլլաս, կոկորդիդ մէջ բան մը կ'ելլայ կը տնկուի ու միանգամայն կը սխմուի, և ներքին ցնցման մը պէս բան մը կ'ըլլայ ու կը թօթուէ հոն մէջի եղածը: Ուտելու ժամանակ ուշադրութիւն չդրուի, վասն զի այդ բանը ինքն իրեն կ'ըլլուի, և բնականապէս միտքն ալ ուրիշ բանի դբաղած կ'ըլլայ: Սակայն փորձէ կլլել առանց բերնիդ մէջ բան մը դնելու, ըսածս մէկէն կը զգաս:

Մտածէ մեր անցքը ինչպէս ներքին պզտի սենեակ մը ըլլար, պատին կէս բարձրութեամբը դուռ մը բացուած և ան ալ վարագոյրով մը գոցած: Չեղունին վրայ ծակ մը կայ որ քիթը կը տանի. յատակին վրայ երկու հաստ խողովակ կը բացուին, առջևէն՝ թոքերունը, ետևէն՝ ստամոքսինը:

Հիմա կը կլես:

Վարագոյրը կը վերնայ ու ձեղունին վրայ կ'երթայ կը յարի: Ա'լ ճամբայ չկայ քիթին մէջ երթալու:

Թոքոց խողովակը պատէն վեր կ'ելլէ, ու ամփոփուելով ու պզտիկնալով դրան տակը կու գայ կը ծածկուի, ինչպէս թէ ուղենար բոլոր տեղը այն պատառին թողուլ՝ որ վրայէն պիտոր անցնի, և աւելի զգուշութեան համար՝ վեր ելած ժամանակը, իր վրան պզտի կափարիչ մը կ'իջնայ՝ որ անցքը կատարեալ կը գոցէ: Ա'լ անկէ ետքը անցք չիմնար, բայց եթէ ստամոքսի խողովակին համար. պատառը շտկէ շիտակ մէջը կ'իջնայ, առանց վրիպելու վտանգի մը, և երբ մէջը անցնի՝ ամեն բան կարգի կը մտնայ:

Ահա բազմահանճար կարգաւորութիւններ. և եթէ ծանրախոհութեամբ մէկը մտածելու ըլլայ, այս քեզի համար չեմ գուրցեր, բոլոր այն զարմանալեաց գանձին վրայ՝ որ մեր ներսի դին ունինք, բոլոր այն հրաշալի անխնեքուն վրայ՝ որ անդադար և ինքիւրենուն կը գործեն, և որոնցմէ կը կախուի մեր կեանքը, ամօթ զգայ պիտոր, այս քեզի կ'ըսեմ որ դեռ ևս այն չափը չես հասած, կեանքը՝ այնչափ բաներ սորվել անցնելուն, մինչդեռ անհոգ կ'ըլլայ սորվելու ասոնք ամենը ինչպէս քմաց երկրորդական բան մը, և պզտի տղաքը միայն զբօսեցնելու յարմար՝ երբ բարի մարդուն մէկը կը գտնուի՝ որ յանձն առնու անոնց պատմել ինչ որ մեծ մարդիկներուն շատը չեն գիտեր: Այո, ամբշնան պիտոր, որ մինչդեռ կրնան լաւագոյն կերպով շարժիլ, իրենք կենդանեաց բնազդմանը՝ որ դարձեալ 'ի մեզ անանկ զարգացեալ չէ՝ կը հետե-

ւին, այն հազարումէկ վտանգներէն կոյրզկուրայն փախչելու՝ որ ամեն ժամ ամեն վայրկեան մեր մեքենայն ջնջելու կը սպառնան, որ իր զսպանակաց իմաստուն յարմարութեամբը այնչափ դիւրաբեկ ու փափկակազմ է: Եւ մարդ միայն իրենն ունենար: Ուրիշ ալ կայ որոնց պատասխանատու ենք, որոնց զարգացմանը վրայ հսկելու ու պահապան ըլլալու հոգն ունինք, և որ ինչպէս ապահով խճմտանքով կրնանք ընել, եթէ անդէտ ըլլանք անոնց կազմութեանը, անոնց գործելուն, այն ամեն տեսակ օրինաց որ՝ մեծ ճարտարապետն իրեն օգնական առեր է, այսպէս ըսեմ, զանոնք կարգելու ժամանակը:

Երբ մայր ըլլալու կարգը գայ, ուրեքի պզտի խորամանկ, որ կը սկսիս աչքերդ խոշոր մը բանալ և ալ խօսքերս աղէկ չհասկնալ, տեսնաս պիտի որ շատ գոհ ըլլաս պիտոր պզտի հասակիդ մէջ սորված ըլլալու, թէ ինչ ճամբով քու պզտի աղջիկդ առանց գիտնալուն ապրի պիտի: Տեսնաս պիտի որ հարիւրումէկ առիթ պիտոր ունենաս, մեր հիմա մէկտեղ սորվածը, անոր հետ օգտեցնելու. և առ այժմ չկայ արգելք մը որ ինքզինքդ ասոնցմով օգտեցնես:

Ապահով եմ, օրինակի համար, որ այս ամենուն ծանօթ ու պարզ քաղաքավարական առածը ստէպ աղջկանդ կըրկնելով, պէտքը չէ ուտելով խօսիլ, այս զգուշութիւնն ալ ունենաս յանձնելու, մանաւանդ կլլելով. և ահա ինչու համար:

Խօսելու համար, ինչպէս որ գիտես, պէտք է մեր թոքերէն դէպ 'ի բերնին մէջ օդը մղել, և խօսքը՝ այս օդուն անցնելէն պատճառած աղմուկն է: Ասոր համար է որ բարձր կարգացած ժամանակդ քեզի կ'ապսպրեն որ ծանր կարդաս, և ամեն կէտի ու ստորակէտի առջին կանկ առնուս. ապա թէ ոչ շունչդ յանկարծ կը հատնի, և կը բռնադատուիս խօթա միտի մը պէս՝ սկսուած պարբերութեան մը մէջ տեղը կենալու, որ շունչ առնելով՝ թոքոց մէջի օդու պաշարը կարենաս նորոգել: Ասոր համար է նաև,

և ոչ թէ խնայութեան պատճառաւ մը, ինչպէս կրնաս կարծել, որ բերնին ետեւը՝ այդ քառադուռն պղտի ճամբան յարմարցուած է, որով բերանը թէ ստամոքսին և թէ թոքոց հետ կրնայ հաղորդակցիլ: Վտանգաւոր անցք մըն է ստամոքսին այցելուայ. սակայն, ինչպէս կրնար քեզի մտածութիւնը դալ, ասոր տեղը ուղղորդ խողովակ մը դիր որ շիտակ ստամոքս իջնայ, և կը տեսնես որ բերանդ համար կը մնայ: Ի՞նչ դժբաղդութիւն աղկանց համար, անանկ չէ մի: Բայց քեզի հետ չարաւելու կ'ըլլամ: Այլ մխիթարուէ, մեծ օրիորդներ կը ճանչնամ՝ որ նոյնպէս ասկէ զուրկ՝ դժբաղդ կ'ըլլային:

Արդ մեր թոքոց դալով, տեսանք որ չար դիպաց դէմն առնելու համար, օդոյ խողովակը՝ մեր կլլած ժամանակը ինքզինքը կը խափանէ: Սակայն թէ որ օդը անմիջապէս այս ժամանակը թոքերէն իրեն հասնի, պէտք է թող տայ որ անցնի: Իր խողովակը օդուն բռնութեանը չդիմանալով իր դիրքը կը դառնայ, պղտի կափարիչն ալ որ մուտքը կը գոցէր՝ կամայ ակամայ կը բացուի, ու բարեբար բնութեան իմաստուն զգուշութիւնները պարապի կ'ելեն: Պատահն որ իյնալու վրայ է՝ փոխանակ իր ծակին մէջ իյնալու՝ միւս ծակին մէջ կ'իյնայ՝ որ անմիջապէս առջնն է. և այն ատեն պառաւք ճոռ գնացած կ'ըլլայ:

Գիտես թէ այս դէպքիս մէջ ինչ կ'ըլլայ: Մարդ կը հազայ, կը հազայ ճաթելու, կապուտնալու և շունչը կորսնցնելու չափ. բոլոր մարմինը գող կ'ելլէ, և աչքերը դուրս կը տնկուին: Թագաւորն ալ ներկայ ըլլայ՝ ճար չըլլալուն՝ պէտք է ամեն բան թողուլ ելլել, և հազիւ թէ անձեռոցով երեսը ծածկելու չափ ժամանակ ունի այն մէկը: Խողովակն որ միայն օդու համար եղած է, տեսնալով որ օտար մը դուռը կը բռնաբարէ, ամենայն ճիգն կը թափէ զան դռնէն դուրս ձգելու: Թոքերը, որ օտարին մոնելովը կը փճանան, բարի ծառային օգնութիւն կը հասնին՝ որ զիրենք խալսելու համար կը կռուի: Սաստկութեամբ կը գրգռին,

ու առատ օդոյ շունչ կը խրկեն անոր՝ որ առջիւէն ամեն բան կը քչէ կը տանի: Այս է հազ ըսուածը. ուստի և կը տեսնանք որ ծուռ կլլուածը՝ բերնէն դուրս կը նետուի, ինչպէս հովէն քշուած փոշի մը: Եւ միայն երբ տեղը մաքրուի՝ փոթորիկն ալ կը դադրի: Շատ մի խնտար, կը խնդրեմ: Եթէ պատառը սաստիկ ծուռ գնացած ըլլայ, եթէ թշնամին շատ զօրաւոր ըլլայ, և թոք ու խողովակ չկարենան շուտ մը անկէ խալսիլ, մահը նոյն տեղ վրայ կը հասնի, ահա ինչ կ'ըլլայ. և օրինակ պակաս չէ: Բնութիւնը փուճ տեղ բան մը չընէր. անանկ երկչոտ մը չէ որ մկան մը քայլելէն զուխը կորսնցունէ: Երբոր կը տեսնաս որ այսպէս մարմինդ բոլոր իր ուժը սաստիկ կերպով մէկ վտանգեալ կէտի մը վրայ կը ժողովէ, և այնչափ վիշտ կը ցուցնէ անանկ դէպքի մը համար որ պղտի բան մը կ'երենայ, նշան է որ վտանգ կայ, և իրական վտանգ, և թէ կը կասկածին կամ ոչ, ամեննին փոյթ չընէր: Այդ աղէկ բան է յիրաւի:

Միթէ հիմա իրաւ չէ որ պղտի աղկանդ ապսպրես պիտի որ կլլած ժամանակը չխօսի:

Այս ալ կ'ուզեմ ըսել որ պէտքը չէ նաև խնտալ. և ևս առաւել այդ ընելու չէ. վասն զի խնտալը՝ որ թոքոց ցնցողական շարժում մըն է, օդոյ ելք մը կը հետևցնէ առատագոյն քան ինչ որ խօսելու համար պէտք է, և այս օդոյ ցնցմունքները ալ աւելի կ'այլալեն այն իմաստուն կարգաւորութիւններն որ իւրաքանչիւր պատառին կը կլլենք՝ մեր կեանքը կը խալսեն, և հետևաբար ալ տւելի ծուռ կ'երթայ պատառը խնտալով քան թէ խօսելով:

Միթէ պէտք ունիմ այս ալ ըսելու որ պէտք է նոյնպիսի խնամքով զգուշանալ ուրիշները խօսեցնելէն կամ խընտացնելէն՝ երբ կլլելու հետ կ'ըլլան, չշարժել, ու չվախցնել զանոնք. պէտք է զգուշանալ, մէկ խօսքով, այն ամեն բանէ որ յանկարծադէպ հանդիպելով օդը իրենց թոքերէն կրնայ դուրս հանել, և իրենց կլլածը ճամբէն խոտորե-

լու վտանգի մէջ դնել: Արդէն մարդա-
վարութիւնը քեզի սորվեցուցած է այս.
այսօրուն համառօտ դասն ալ նոյնը քեզի
կը զուրցէ, կարծեմ, անանկ կերպով
մը որ աւելի տպաւորութիւն ընէ պիտի
վրադ: Ի՞նչ կ'ըլլայիր եթէ երբեք տես-
նայիր մէկը՝ որ ասանկ պարզ երեւոյթ
ունեցող կատակով մը՝ առջևդ մեռնէր:

Որպէս զի քեզ այս անախորժ գա-
ղափարով չթողում, քեզի մնաս բարով
ըսելէս առաջ՝ կ'ուզեմ այս դրան վարա-
գուրին, ներքին սենեկին, և խողովակ-
ներուն՝ որոնց վրայ խօսեցայ մինչև հի-
մա, անունները սորվեցնել:

Դրան վարագոյրը կը կոչուի՝ — voile
du palais — քմաց առագաստ:

Ներքին սենեակը կը կոչուի — ar-
rière-bouche — կոկորդ:

Ստամոքսին խողովակը կ'ըսուի — oe-
sophage — որկոր:

Թոքոց խողովակը կը կոչուի — la-
rynx — հագագ:

Այս խողովակիս մուտքը — glotte —
աւցիկն է, և պզտի կափարիչը որ կու-
գայ զան կը գոցէ կլլելու ժամանակը
կ'ըսուի — épiglote — զանկիկ:

Քեզնէ կը խնդրեմ որ այս անուննե-
րուս մեկնութենէն ազատ ընես զիս,
ապա թէ ոչ ծայրը պիտոր չբերենք:
Առջի երկուքը գաղղիարէն ըլլալով՝ դիւ-
րաւ կը մեկնուին: Միւս չորսերը յու-
նարէնէ առաջ կու գան, և այս գիտ-
նալդ բաւական է: Ի վերայ այսր ամե-
նայնի անուններէն բան մը չելլեր: Ես
բաւական է որ ապահով ըլլամ որ կըր-
ցայ քեզի աղէկ հասկցնել այս առար-
կայից գործելուն կերպը, և վերջը դու
ինչպէս ուզես անուանէ զանոնք:

Հիմա աղէկ բռնէ ինքզինքդ: Մեծ
սենեակներուն ճամբան ենք, և տէրը
տեսնալու կ'երթանք, այն հռչակաւոր
տանտէրը, որուն մարդիկ չեն կրնար
մօտենալ՝ եթէ ոչ շատ մը արարողու-
թիւններէ ետքը:

Կը շարունակուի:

ԳԱՂՂԻՈՅ ԲԻԻԻԻ ՆՈԴՐԸ ՏԱՄ

ԵՒՐՈՊԵՈՅ ԱՄԵՆԷՆ ԲԱՐՁՐ ԱՐՁԱՆԸ

Այն երկիրները որոնց միջէն Լուար
գետը կ'անցնի՝ Գաղղիոյ գոհար մըն են,
ուստի Գաղղիացի ճանապարհորդք մե-
ծաւ ախորժով իրենց քայլերը դէպ 'ի
այս փառաւոր գետը կ'առնուն: Միւս
կողմանէ Ալպեոնեա և Լիոնի գաւառը
ճանապարհորդելն ալ շատ դիւրագնոյ
է: Ով որ բնութեան տեսարանները
կ'ախորժի, իր քայլը դէպ 'ի լեռը կ'առ-
նու, որ իր զարմանալի կազմութեամբը՝
պանչելի տեսարաններ կը ներկայա-
ցընէ: Մինչդեռ ձորին մէջ որուն մէջէն
Լուար գետը կ'անցնի, ամենայն ինչ
կեանք է և շարժում. հոս տեղս միայ-
նութեան լռութիւնը կը տիրէ: Կարծես
թէ երկրիս տէրութիւնները այս տեղս
մէկմէկու վրայ իյնալով, ահագին ժայ-
ռերը մէկմէկու վրայ կործաններ են. ա-
մենէն մեծ հրաբխային խառնակու-
թիւնը հոս տեղս կը տեսնուին: Սակայն
այս խառնակութեան մէջէն՝ անդորր ու
խաղաղ Բիւի գիւղաքաղաքը կ'ամբառ-
նայ, և անոր ետեւը հսկայաբար՝ մայր
եկեղեցւոյն գմբէթը կը տեսնուի 5000
ոտք բարձրութեամբ, և լերան կոնաձև
մը: Ասոր գագաթը ուխտական եկեղե-
ցի մը կայ, որ Գաղղիոյ ամենէն հինը և
ամենէն յաճախուածն է, և անոր գա-
գաթնակիտէն՝ քանի մը տարիէն 'ի վեր
Աստուածածնի արձանը կ'ամբառնայ,
որ Եւրոպիոյ ձուլածոյ արձաններէն ա-
մենէն մեծն է, 16 մեղր բարձր, և 17
լայն անմիջապէս այն տեղ ուր տրամա-
գիծը մեծագոյնն է: Դիւրաւ կրնայ
հասկցուիլ որչափ դժուարին եղած պի-
տոր ըլլայ և որչափ աշխատանք պատ-
ճառած այս արձանիս ձուլուածքը, և
հիմակուան գտնուած տեղը հանուիլ
ու զետեղուիլը: Սակայն ամենէն աւելի
զարմանալի բանը Պոնասիէօ ձուլագոր-
ծին ճարտարութիւնն է, որ այն յաղթ
արձանին վրայ յաջողեր է կուսական
գեղեցկութեան նախատիպ գաղափարը
պահելու: Որպէս զի ընթերցողը կարե-